ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/64

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8841-2019 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-2019 գրության հիման վրա, 29.05.2019թ. թիվ 26/26-1/8841 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ -ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

2018թ.-ի մարտի 20-ին «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել է ապրանքների մատակարարման թիվ «ԳՀԱՊՁԲ-9/1-5» պայմանագիրը ընդհանուր 43 891 000 ՀՀ դրամի (ընդհանուր 7 չափաբաժին):

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն պատշաճ մատակարարել է 5 չափաբաժինները:

Չմատակարարված չափաբաժիններն ու քանակներն են՝

Ամօքսիցիլլին - 70 000 (ընդհանուր՝ 100 000)

Բենզիլպենիցիլլին - 31 000 (ընդհանուր՝ երրորդ եռամսյակ՝ 50 000, չորրորդ՝ 70 000)

Ընկերությունը չի մատակարարել վերոհիշյալ ապրանքները այն պատճառներով, որոնք, ըստ Ընկերության եղել են «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի վերահսկողությունից դուրս:

1.Ամօքսիցիլլին

Պայմանագրային պարտավորության չկատարման պատճառ է հանդիսացել տվյալ չափաբաժնի արտադրող կազմակերպության ձախողումն ապրանքի արտադրության և մատակարաման հետ կապված:

Սույն հարցով Ընկերությունը գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությունը խնդրանքով՝ երկարաձգել պայմանագրի ժամկետը համաձայն 8.6 կետի, սակայն պաշտպանության նախարարությունը չի տվել որևէ արձագանք:

Նաև նույն գրությունով Ընկերությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ առաջարկելով մատակարարել 30-40 հազար դեղապատիճ 08/2019 սպառման ժամկետով, սակայն կրկին ոչ մի պատասխան նախարարության կողմից:

2. Բենզիլպենիցիլլին

Մնացորդային 31 000 քանակը մատակարարելու համար արտադրող կազմակերպությանը տրվել է նոր պատվեր 2018թ-ի օգոստոսին, իսկ բեռը արտադրվել է և առաքվել է 2018թ-ի հոկտեմբերին:

Կապված ծովային գծի ուշացումների հետ, որի պատճառ է հանդիսացել ոչ բարենպաստ եղանակային պայմանները, 2018թ.-ին «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն գրավոր դիմել է ՀՀ

պաշտպանության նախարարությանը խնդրանքով երկարաձգել պայմանագրի ժամկետը 30 օրացուցային օրով, սակայն նախարարությունը Ընկերության գրությունը թողել է անպատասխան՝ չկատարելով պայմանագրի 8.6 կետը, այն դեպքում, երբ որ Վաճառողի կողմից եղել է նման առաջարկ և բերվել են հիմքերը, իսկ Գնորդի մոտ ապրանքի օգտագործման պահանջը վերացած չի եղել:

Վերոնշյալ բեռները «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ստացել է միայն այս տարվա սկիզբ և հիմա ունի խնդիրներ ապրանքի իրացման հետ կապված:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Ընկերությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակը հանդիսանում է ֆորս մաժորային և խնդրում է «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/64 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-2019 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 20.03.2018թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով գնման Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ից միակողմանի՝ մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը:

Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.05.2019թ. միաժամանակ ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/64 ընթացակարգի շրջանակներում 04.06.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 20.03.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
2. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին ուղղված 21.05.2019թ. թիվ ԴՎԱ/1924 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը, 06.05.2019թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և դրա հիման վրա կնքված N 1 համաձայնագիրը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8841-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/606-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի միջև 20.03.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1-ին համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 8.13-րդ կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

Կողմերի միջև 27.04.2018թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով պայմանագրի N 1 համաձայնագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետով, հիմք ընդունելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, սահմանվել է ապրանքների գնման և վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածներ N 1-ի և 2-ի:

Նույն համաձայնագրի Հավելված N 1-ի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 2 388 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 100 000 դեղահատ «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» ապրանքատեսակը, որից 30 000-ական դեղահատ՝ 2018թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներում, իսկ 40 000 դեղահատ՝ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ., ինչպես նաև 6 684 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ 120 000 սրվակ «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/» ապրանքատեսակը, որից 50 000-ը՝ 2018թ. 3-րդ եռամսյակում, իսկ 70 000 սրվակը՝ 2018թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի 03.05.2019թ. թիվ 643 զեկուցագրի համաձայն՝ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» և «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/» ապրանքատեսակների մասով Ընկերության կողմից մատակարարումներն իրականացվել են մասամբ:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին ուղղված 21.05.2019թ. թիվ ԴՎԱ/1924 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Ընկերությունը «ԳՀԱՊՁԲ-9/1-5» ծածկագրով պայմանագրի և 27.04.2018թ. կնքված N 1 համաձայնագրի համաձայն, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 100 000 դեղահատ «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» և 120 000 սրվակ «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/» ապրանքատեսակները, սակայն Ընկերության կողմից չեն մատակարարվել 70 000 դեղահատ «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» և 31 000 սրվակ «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/»:

Նույն գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը, 06.05.2019թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և դրա հիման վրա 27.04.2018թ. կնքված N 1 համաձայնագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն թույլ է տվել վերջինիս և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 20.03.2018թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-9/1-5» պայմանագրի էական խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը Պայմանագրի և դրա անբաժանելի մասը հանդիսացող N 1 Համաձայնագրի համաձայն՝ պարտավորվել է սահմանված ժամկետներում ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել համապատասխան քանակների «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» և «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/» ապրանքատեսակները, որոնք սակայն Ընկերության կողմից մատակարարվել են թերի, չեն մատակարարվել 70 000 դեղահատ «Ամօքսիցիլին j01ca04 /ամօքսիցիլին, amoxicillin/» և 31 000 սրվակ «Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01 /բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/»:

Գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման խոչընդոտ հանդիսացած հանգամանքներին, որոնք առաջացել են Ընկերության կամքից անկախ, հայտնում եմ, որ Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8841-2019 գրությամբ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**